**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/45 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/45-3 ծածկագրով պայմանագրում 2023 թվականի սեպտեմբերի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «Ս.Լ.Լ-ԳԱԶ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2023 թվականի սեպտեմբերի 26-ին կատարված փոփոխությունների արդյունքում հստակեցվել է ապրանքի գնման ժամանակացույցը և հաստատվել է դրա ձեռքբերման դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2023 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/45-3 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կողմից ապրանքի ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի ձեռքբերման համար «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ**